

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Արա Բաբլոյանի, Սամվել Նիկոյանի, Մկրտիչ Մինասյանի, Հերմինե Նաղդալյանի, Առաքել Մովսիսյանի, Համլետ Հարությունյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածն առաջարկում ենք հանել, քանի որ դրանով կատարվող լրացման արդյունքում օրենքով սահմանված առողջության ապահովագրության վճարները չեն ներառվի համախառն եկամտի մեջ, մինչդեռ նախագծի 2-րդ հոդվածով կատարվող լրաց-

մամբ համախառն եկամտի մեջ չներառվող մեծության համար սահմանվում է համախառն եկամտից կատարվող նվազեցման առավելագույն թույլատրելի չափ:

2. 3-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից» բառերն առաջարկում ենք փոխարինել «2010 թվականի հունվարի 1-ից» բառերով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 27-ի նիստի N 35 արձանագրության 25-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում առողջապահության ֆինանսավորման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացրել համանման նախագիծ, ինչը կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է համագործակցել մեկ միասնական նախագծով հանդես գալու նպատակով:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-707-18.09.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ  
կատարելու մասին**

**Հոդված 1.** «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի ժ) կետը «օրենքով սահմանված» բառերից հետո լրացնել «առողջության ապահովագրության եւ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետեւյալ ենթակետով՝

ի) իրավաբանական անձանց եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից իրենց աշխատակից ֆիզիկական անձանց համար ամսական մինչեւ 10 հազար դրամ կատարված առողջության ապահովագրավճարները:

**Հոդված 3.** Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ  
կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտության մասին**

Հանրության առողջության պահպանումը հանդիսանում է պետության անվտանգության եւ զարգացման հիմնական երաշխիքներից մեկը: Ներկա պայմաններում, երբ պետական բյուջեն հնարավորություն չի ընձեռնում ապահովել բնակչության բոլոր առողջապահական խնդիրների լիարժեք լուծումը, ելնելով սոցիալական պատասխանատվության հիմունքներից՝ անհրաժեշտություն է առաջացել ստեղծել խթանիչ մեխանիզմներ՝ գործատուին իր աշխատակիցների առողջության պահպանման հարցերին մասնակից դարձնելու համար, որը մասնավորապես, կարող է իրականացվել առողջության ապահովագրության միջոցով:

Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 11-ով երաշխավորվում է առողջության պաշտպանության իրավունքը՝ սահմանելով նշված իրավունքի արդյունավետ իրականացմանն ուղղված մի շարք դրական պարտավորություններ: Ըստ խարտիայի 12-րդ հոդվածի բոլոր աշխատողները եւ նրանց խնամքի տակ գտնվող անձինք ունեն սոցիալական ապահովագրության իրավունք: Պետությունները ստանձնելով խարտիայի իրականացման պատասխանատվությունը՝ պետք է ապահովեն այն՝ օրենքով ամրագրված սոցիալական ապահովագրության համակարգի գործունեության միջոցով: Չնայած Եվրոպական սոցիալական խարտիան չի պարտադրում ընդհանուր մոդել, փոխարենը այն նախատեսում է համընդհանուր բնույթի նվազագույն ստանդարտները՝ սոցիալական ապահովագրության համար ենթադրելով միասնական, ինչպես նաեւ մասնագիտական, ընդհանուր եւ հատուկ ծրագրեր:

Նախեւառաջ, սոցիալական ապահովագրության համակարգը, ըստ խարտիայի պահանջների, պետք է ընդգրկի ավանդական ռիսկերը՝ առողջապահությունը, ժամանակավոր անաշխատունակությունը, գործազրկությունը, ծերությունը, աշխատանքի ընթացքում ստացված մարմնական վնասվածքները, ընտանիքը եւ մայրությունը:

Երկրորդ, համակարգը պետք է ֆինանսավորվի համատեղ, այսինքն՝ գործատուների եւ աշխատողների վճարների եւ/կամ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Համընդհանուր ընդունված է, որ մարդկային ռեսուրսները հանդիսանում են կազմակերպությունների բոլոր ռեսուրսների կարեւորագույն մասը: Մի կողմից աշխատողները հանդիսանալով սոցիալական պետության անդամ, իրենց եկամուտներից պետք է եկամտահարկ վճարեն եւ դրանով մասնակից դառնան պետական բյուջեի ձեւավորմանը եւ սոցիալական ծրագրերի իրականացմանը: Մյուս կողմից նրանք հանդիսանում են կազմակերպության համար (որի աշխատակիցն են) աշխատուժ, որի միջոցով կազմակերպությունը հասնում է իր նպատակներին եւ ստանում է արդյունք: Եթե ըստ գործող օրենսդրական դաշտի՝ կազմակերպությունների այլ ռեսուրսների պահպանման համար (օրինակ ավտոմեքենա, սարքավորումներ եւ այլն) իրականացվող ծախսերը չեն հարկվում, ապա այն ծախսերը, որոնք ուղղվում են աշխատակիցների առողջության ապահովագրությանը համարվում են եկամուտ եւ ենթարկվում են հարկման:

Մարդկային ռեսուրսների պահպանման եւ զարգացման համար կարեւոր նախադրյալ է հանդիսանում նրանց առողջության պահպանման հարցերի կարգավորումը: Այդ իսկ պատճառով հարկավոր է վերանայել մարդկային ռեսուրսների առողջության պահպանմանը ուղղվող ծախսերի (այս դեպքում՝ առողջության ապահովագրավճարների) նկատմամբ մոտեցումները, որն իր հերթին նպաստող պայմաններ կստեղծի Հայաստանում առողջության կամավոր ապահովագրության զարգացման խթանման համար:

Ամբողջ աշխարհում առողջության ապահովագրության համար որպես խթանող մեխանիզմ սահմանվել են առողջության ապահովագրավճարների հարկման նվազեցումները՝ գործատուների համար կոլեկտիվ ապահովագրության դեպքում: Նման մեխանիզմ կիրառվում է Ավստրիայում, Բելգիայում, Դանիայում, Ֆրանսիայում եւ այլ երկրներում, որտեղ ամրագրված է հարկման նվազեցումների համար անհրաժեշտ ապահովագրավճարների որոշակի շեմ, ինչը սահմանված է նաեւ ներկայացված նախագծում:

Բացի վերը նշված փաստարկներից, սույն մեխանիզմը թույլ կտա նվազեցնել առողջապահության ոլորտի ոչ պաշտոնական վճարները եւ բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձը: